

ք. Երևան

«21» 07 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հաքարշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Մարգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը և կատարման ժամկետը յուրաքանչյուր չափաբաժնի համար սահմանվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել՝ երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման

ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կապալառուին հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 **աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 9713000 (ինը միլիոն յոթ հարյուր տասներեք հազար) ՀՀ դրամ, որից 1618833 (մեկ միլիոն վեց հարյուր տասնութ հազար ութ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ընդ որում՝

1-ին չափաբաժին 1860000 (մեկ միլիոն ութ հարյուր վաթսույն հազար) ՀՀ դրամ՝ որից 310000 (երեք հարյուր տասը հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին 3180000 (երեք միլիոն հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ որից 530000 (հինգ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

3-րդ չափաբաժին 2510000 (երկու միլիոն հինգ հարյուր տասը հազար) ՀՀ դրամ՝ որից 418333 (չորս հարյուր տասնութ հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

4-րդ չափաբաժին 2163000 (երկու միլիոն հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամ՝ որից 360500 (երեք հարյուր վաթսուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:³¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

³¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանծնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելու հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2,

«Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

ՀՀ

ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

(ստորագրություն) Կ.Տ. Վ. Գասպարյան



Կ Ա Պ Ա Լ Ա Ռ ՈՒ

«Հաքարչին» ՍՊԸ

Արարատի մարզ, գ. Արմաշ,


Գործարանային փ/տ 18

ՀՎՀՀ 04232266

Հայէկոնոմբանկ ԲԲԸ, Գորիս մ/ճ

Հ/Հ 163298380011

Տնօրեն՝



(ստորագրություն) Կ.Տ. Է. Մարգարյան

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Չափաբաժին 1. Կրթական օբյեկտների հիմնանորոգում -1

«ԱՐԵՆԻ ԴԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ցուցիչ	Միավորի ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը
					հազ. դրամ	հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		«Արենիի պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ				
		Բաժին-1				
		<u>Ղասասենյակի շինարարական աշխատանքներ</u>				
		<u>Քանդման աշխատանքներ</u>				
1	P11-80	Սոսնձաներկի մաքրում պատերից	մ2	51.1	0,25	12,775
2	P11-80	Յուղաներկի մաքրում պատերից	մ2	20.0	0,26	5,200
3	P11-80	Սոսնձաներկի մաքրում առաստաղներից	մ2	25.3	0,25	6,325
4	C310-3 տ.մ.կ 29	Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 3կմ	տ	1.2	2,25	2,700
		Ընդամենը				27,000
		<u>Կառուցողական աշխատանքներ</u>				
1	P14-380	Պատերի քսահարթում գիպսոնիտով	մ2	14.3	0,70	10,010
2	E15-664	Պատերի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ2	71.1	1,37	97,407
3	P11-187	Առաստաղների քսահարթում գիպսոնիտով	մ2	5.1	0,58	2,958
4	E15-665	Առաստաղի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ2	25.3	1,58	39,974
5	8-603-1	Լուսատու առաստաղային 30վտ LED, 1250x250	հատ	1	10,00	10,000
3	8-402-2	Հաղորդալար պղնձե ՈՌՑ 3x1.5մմ ²	զմ	15.0	0,49	7,350
		Ընդամենը				167,699
		Ընդամենը՝ Բաժին-1				194,699
		Բաժին-2				
		<u>Սան. հանգույցի շինարարական աշխատանքներ</u>				
		<u>Քանդման աշխատանքներ</u>				
1	E46-88	Միջնորմների քանդում բլոկներից, ճ=100մմ	մ2	7.4	0,75	5,550
2	E46-79	Քարե պատի քանդում	մ3	0.3	11,15	3,345
3	E46-124	Մետաղապլաստե դռների ապամոնտաժում	մ2	3.9	1,10	4,290
4	P13-5	Հախճասալի քանդում պատերից	մ2	21.2	0,54	11,448
5	E46-109	Կերամիկական սալիկներով հատակների քանդում	մ2	4.7	0,40	1,880
3	E46-119 E46-120	Հատակների ցեմենտավազե հարթաշերտի քանդում h=50մմ	մ2	4.7	0,59	2,773

7	E46-94	Կախովի առաստաղի քանդում	մ2	4.7	0,65	3,055
3	P19-69	Լվացարանի ապամոնտաժում	հատ	1	0,68	0,680
3	P19-70	Զուգարանակոնքի ապամոնտաժում	հատ	2	0,55	1,100
10	P19-74	Հոսակի ապամոնտաժում	հատ	1	0,56	0,560
11	C310-3 տ.մ.կ 29	Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 3կմ	տ	5.6	2,03	11,368
		Ընդամենը				46,049
		<u>Կառուցողական աշխատանքներ</u>				
1	շուկա	Մետաղապլաստ դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքները/, պրոֆիլ արտերկիր	մ2	1.9	41,62	79,078
2	E15-260	Պատերի սվաղում ցեմենտավազային շաղախով	մ2	21.2	1,27	26,924
3	E15-82	Պատերի երեսապատում հախճասալով	մ2	21.2	8,96	189,952
4	E11-55 E11-56	Հատակների ցեմենտավազե հարթեցնող շերտի իրականացում h=50մմ	մ2	5.1	1,64	8,364
5	E11-135	Խեցեսալե հատակների պատրաստում	մ2	5.1	11,00	56,100
3	E34-389 K=0.5	Կախովի առաստաղի իրականացում ՊՎՔ նյութից	մ2	5.1	4,47	22,797
7	շուկա	Սան. հանգույցում այլումինե բռնածողի տեղադրում	զմ	0.8	22,00	17,600
3	8-605-1	Կախովի լուսատուների մոնտաժում	հատ	4	6,00	24,000
3	8-402-2	Հաղորդալար պղնձե ՈՈՑ 3x1.5մմ ²	զմ	20.0	0,30	6,000
10	8-591-2	Անջատիչ մեկստեղնավոր	հատ	1	0,45	0,450
11	շուկա	Տուփեր ճյուղավորման	հատ	1	13,00	13,000
12	շուկա	Տուփեր վարդակների և անջատիչների տեղադրման համար	հատ	1	0,20	0,200
		Ընդամենը				444,465
		<u>Սառը ջրամատակարարման համակարգ</u>				
1	E16-261	de20 պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում, փորձարկումով	զմ	5.1	2,29	11,679
2	E22-312	խողովակաշարի լվացում ախտահանումով	կմ	0.0051	59,09	0,301
3	12-811-1	DN15 արույրե զնդային փականի մոնտաժում	հատ	1	3,05	3,050
4	12-811-1	DN15 լատունե շառավղային փականի մոնտաժում	հատ	3	3,00	9,000
5	շուկա	Մետաղական de20xDN15 պարուրակով կցորդիչի մոնտաժում	հատ	2	0,99	1,980
3	շուկա	de20, α=90° պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	2	0,04	0,080
7	շուկա	de20xDN15, α=90° ներքին պարուրակով պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	3	0,43	1,290
3	շուկա	de20 պոլիպրոպիլենե եռաբաշխիչի մոնտաժում	հատ	2	0,06	0,120
3	շուկա	de20 խողովակների պատերին ամրացման խամութների մոնտաժում	հատ	7	0,06	0,420
		Ընդամենը				27,920
		<u>Ջրահեռացման համակարգ</u>				
1	E16-34	Φ100 կոյուղու պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում, փորձարկումով	զմ	5.1	2,18	11,118
2	E16-33	Φ50 կոյուղու պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում, փորձարկումով	զմ	2.7	1,20	3,240
3	E22-365	Φ100, α=90° պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	1	1,18	1,180
4	E22-365	Φ100, α=45° պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	2	1,18	2,360
5	E22-365	Φ50, α=90° պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	2	0,93	1,860
3	E22-365	Φ50, α=45° պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	3	0,93	2,790
7	E22-366	Φ100 պոլիպրոպիլենե թեք եռաբաշխիչի մոնտաժում	հատ	2	2,00	4,000
3	E22-366	Φ100xΦ50 պոլիպրոպիլենե անցումային թեք եռաբաշխիչի մոնտաժում	հատ	2	1,80	3,600
3	E22-	Φ100 պոլիպրոպիլենե ստուգիչի մոնտաժում	հատ	1	1,64	1,640

	365							
10	E22-365	Փ100 պոլիպրոպիլենե մաքրիչի մոնտաժում	հատ	1	1,94	1,940		
11	E22-365	Զուգարանակոնքի թողարկի կցողիչի մոնտաժում	հատ	1	3,25	3,250		
12	E22-365	Կոյուղու ձկուն կցողիչի մոնտաժում Փ100	հատ	2	2,10	4,200		
13	շուկա	Փ100 խողովակների պատերին ամրացման խամուբների մոնտաժում	հատ	3	0,23	0,690		
14	շուկա	300x400մմ պլաստիկ դռնակների իրականացում կանգնակների պատյանների վրա (КОРОБ)	հատ	1	5,21	5,210		
		Ընդամենը					47,078	
		Սանիտարական սարքեր						
1	E17-28	Լվացարարանների տեղադրում, ներառյալ ծորակ-խառնիչը եւ սիֆոնը	կ-տ	1	22,50	22,500		
2	E17-61	Զուգարանակոնքերի տեղադրում թեք թողարկով, լվացման բաքով	կ-տ	1	27,00	27,000		
3	E17-38 կիր.	Լվացման ծորակների տեղադրում	կ-տ	1	9,50	9,500		
4	E17-36	Հոսակների տեղադրում Փ50մմ	կ-տ	1	2,80	2,800		
5	շուկա	Թղթի կախիչ	հատ	1	3,10	3,100		
6	շուկա	Օճառաման	հատ	1	2,50	2,500		
7	ինֆ. տեղ.	Հայելի	հատ	1	7,30	7,300		
		Ընդամենը					74,700	
		Ընդամենը՝ Բաժին-2					640,212	
		Բաժին-3						
		Թեքահարթակի շինարարական աշխատանքներ						
		Քանդման աշխատանքներ						
1	E46-124	Մուտքի և միջանցքի մետաղապլաստե դռների ապամոնտաժում	մ2	10.2	1,10	11,220		
2	E46-99	Բետոնե շերտի քանդում	մ3	0.2	15,00	3,000		
3	C310-3 տ.մ.կ 29	Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 3կմ	տ	2.8	2,11	5,908		
		Ընդամենը					20,128	
		Կառուցողական աշխատանքներ						
1	շուկա	Մետաղապլաստե դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքները/, արոֆիլ արտերկիր	մ2	10.3	42,00	432,600		
2	E6-1 կիր.	Բետոնե թեքահարթակի իրականացում B15 դասի բետոնով	մ3	0.5	35,20	17,600		
3	E15-77	Թեքահարթակի երեսպատում բազալտե սալիկներով 40մմ հաստ.	մ2	3.3	15,00	49,500		
4	E15-77	Թեքահարթակի կողային հատվածների երեսպատում բազալտե սալիկներով 20մմ հաստ.	մ2	0.6	12,43	7,459		
5	շուկա	Թեքահարթակի այլումինե բազրիքների տեղադրում	գմ	3.6	24,00	86,400		
		Ընդամենը					593,559	
		Ընդամենը՝ Բաժին-3					613,687	
		Ընդամենը						1448,598
		Շահույթ, 7%					101,402	
		Ընդամենը					1550,000	
		ԱԱՀ, 20%					310,000	
		Ընդամենը					1860,000	

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Վայոց ձորի մարզ, գ. Արենի հասցեում:

Չափաբաժին 2. Կրթական օբյեկտների հիմնանորոգում-2
«ՇԱՏԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Միավոր	Միավորի ընդհանուր արժեքը	
					հազ. դրամ	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		«Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ				
		Բաժին-1				
		<u>Ղասասենյակի շինարարական աշխատանքներ</u>				
		<u>Քանդման աշխատանքներ</u>				
1	P17-140	Թուջե մարտկոցների ապամոնտաժում	հատ	24	0,87	20,880
2	P11-80	Յուղաներկի մաքրում պատերից	մ2	80.4	0,25	20,100
3	P11-80	Սոսնձաներկի մաքրում առաստաղներից	մ2	46.9	0,25	11,725
4	E46-121	Լինոլեումից հատակի քանդում	մ2	46.9	0,13	6,097
5	E46-119 E46-120	Հատակների ցեմենտավազե հարթաշերտի քանդում h=50մմ	մ2	46.9	0,60	28,140
6	8-603-1 K=0.4	Լուսատուների ապամոնտաժում	հատ	4	0,36	1,440
7	C310-3 տ.մ.կ 29	Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 3կմ	տ	5.5	2,26	12,430
		Ընդամենը				100,812
		<u>Կառուցողական աշխատանքներ</u>				
1	E10-103	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 40սմ լայնությամբ	մ2	1.9	0,61	1,159
2	շուկա	Պլաստմասե պատուհանագոգի արժեքը, b=40սմ	զմ	4.7	4,30	20,210
3	E15-260	Պատերի սվաղում ցեմենտավազային շաղախով, (h=1.25մ)	մ2	33.2	1,25	41,500
4	P14-380	Պատերի քսահարթում գիպսոնիտով	մ2	9.5	0,68	6,460
5	E15-664	Պատերի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ2	80.4	1,17	94,068
6	P11-187	Առաստաղների քսահարթում գիպսոնիտով	մ2	9.4	0,50	4,700
7	E15-665	Առաստաղի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ2	46.9	1,80	84,420
8	E11-55 E11-56	Հատակների ցեմենտավազե հարթեցնող շերտի իրականացում h=50մմ	մ2	46.9	1,20	56,280
9	E11-191 կիր.	Լամինատե հատակի պատրաստում 12մմ /արտերկրյա, ներառյալ սպունգը եւ շրիշակները/	մ2	46.9	8,85	415,065
10	E18-111	Ջեռուցման թուջե մարտկոցների վերատեղադրում	հատ	24	1,41	33,840
11	E15-614	Ջեռուցման թուջե մարտկոցների ներկում 2 շերտ	մ2	2.9	1,50	4,350
12	8-603-1	Լուսատու առաստաղային 30վտ LED, 1250x250	հատ	4	11,00	44,000
13	E46-57	Ակոսների փորում պատերում	զմ	60.0	0,55	33,000
14	8-402-2	Հաղորդալար պղնձե ՈՈՑ 3x2.5մմ ²	զմ	30.0	0,60	18,000
15	8-402-2	Հաղորդալար պղնձե ՈՈՑ 3x1.5մմ ²	զմ	30.0	0,55	16,500
16	8-591-7	Վարդակ երկբևեռ հողանցիչով	հատ	3	1,13	3,390
17	8-591-10	Անջատիչ երկստեղնավոր	հատ	1	1,782	1,782
18	շուկա	Տուփեր ճյուղավորման	հատ	2	0,20	0,400

19	շուկա	Տուփեր վարդակների և անջատիչների տեղադրման համար	հատ	4	0,25	1,000
		Ընդամենը				880,124
		Ընդամենը՝ Բաժին-1				980,936
		Բաժին-2				
		<u>Սան. հանգույցի շինարարական աշխատանքներ</u>				
		<u>Քանդման աշխատանքներ</u>				
1	E46-88	Միջնորմների քանդում բլոկներից, δ=100մմ	մ2	7.7	0,80	6,160
2	E46-124	Մետաղապլաստե դռների ապամոնտաժում	մ2	5.4	1,10	5,940
3	P13-5	Հախճասալի քանդում պատերից	մ2	18.9	0,53	10,017
4	P11-80	Սոսնձաներկի մաքրում պատերից	մ2	19.7	0,30	5,910
5	E46-109	Կերամիկական սալիկներով հատակների քանդում	մ2	9.1	0,39	3,549
6	E46-119 E46-120	Հատակների ցեմենտավազե հարթաշերտի քանդում h=100մմ	մ2	9.1	1,10	10,010
7	E46-99	Բետոնե շերտի քանդում	մ3	0.4	13,87	5,548
8	P19-69	Լվացարանի ապամոնտաժում	հատ	2	0,51	1,020
9	E17-57 K=0.4	Ասիական զուգարանակոնքերի ապամոնտաժում	կ-տ	2	1,20	2,400
10	P19-74	Հոսակի ապամոնտաժում	հատ	2	0,50	1,000
11	P17-140	Թուջե մարտկոցների ապամոնտաժում	հատ	5	0,90	4,500
12	C310-3 տ.մ.կ 29	Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 3կմ	տ	4.8	2,00	9,600
		Ընդամենը				65,654
		<u>Կառուցողական աշխատանքներ</u>				
1	E8-169	Միջնորմների կառուցում թեթևաբետոնե բլոկներից 10ամ հաստությամբ	մ2	9.0	2,84	25,560
2	E6-106 K=0.5	Բլոկերի դատարկությունների լցում ցեմենտ-ավազային շաղախով	մ3	0.3	39,41	11,823
3	շուկա	Ամրան □10A500C	տ	0.03	390,99	11,730
4	շուկա	Մետաղապլաստե դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքները/, պրոֆիլ արտերկիր	մ2	5.3	41,00	217,300
5	E15-260	Պատերի սվաղում ցեմենտավազային շաղախով	մ2	35.5	1,26	44,730
6	E15-82	Պատերի երեսապատում հախճասալով	մ2	26.3	8,00	210,400
7	E15-664	Պատերի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ2	30.0	1,33	39,900
8	E6-1 կիր.	Բետոնե շերտի իրականացում B15 դասի բետոնով	մ3	0.2	35,20	7,040
9	E11-55 E11-56	Հատակների ցեմենտավազե հարթեցնող շերտի իրականացում h=50մմ	մ2	9.5	1,63	15,485
10	E11-135	Խեցեսալե հատակների պատրաստում	մ2	9.5	14,20	134,900
11	E34-389 K=0.5	Կախովի առաստաղի իրականացում ՊԿԲ նյութից	մ2	9.5	4,80	45,600
12	E18-111	Զեռուցման թուջե մարտկոցների վերատեղադրում	հատ	5	0,91	4,550
13	E15-614	Զեռուցման թուջե մարտկոցների ներկում 2 շերտ	մ2	0.6	1,09	0,654
14	շուկա	Սան. հանգույցում պլյումինե բռնածղղի տեղադրում	զմ	0.8	23,00	18,400
15	8-605-1	Կախովի լուսատուների մոնտաժում	հատ	7	8,00	56,000
16	8-402-2	Հաղորդալար պղնձե ՈՌՑ 3x1.5մմ ²	զմ	30.0	0,40	12,000
17	8-591-2	Անջատիչ մեկստեղանավոր	հատ	3	1,25	3,750
18	շուկա	Տուփեր ճյուղավորման	հատ	2	0,16	0,320
19	շուկա	Տուփեր վարդակների և անջատիչների տեղադրման համար	հատ	3	0,170	0,510
		Ընդամենը				860,652
		<u>Սառը ջրամատակարարման համակարգ</u>				
1	E16-	de25 պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում,	զմ	2.7	2,00	5,400

	262	փորձարկումով				
2	E16-261	de20 պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում, փորձարկումով	զմ	10.2	2,30	23,460
3	E22-312	խողովակաշարի լվացում ախտահանումով	կմ	0.0129	60,00	0,774
4	12-811-1	DN20 արույրե գնդային փականի մոնտաժում	հատ	1	4,00	4,000
5	12-811-1	DN15 լատունե շառավղային փականի մոնտաժում	հատ	5	3,00	15,000
6	շուկա	Սետադական de25xDN20 պարուրակով կցորդիչի մոնտաժում	հատ	2	1,40	2,800
7	շուկա	de25, $\alpha=90^\circ$ պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	2	0,10	0,200
8	շուկա	de20, $\alpha=90^\circ$ պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	2	0,04	0,080
9	շուկա	de20xDN15, $\alpha=90^\circ$ ներքին պարուրակով պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	5	0,42	2,100
10	շուկա	de25xde20 պոլիպրոպիլենե անցումային եռաբաշխիչի մոնտաժում	հատ	1	0,12	0,120
11	շուկա	de25 պոլիպրոպիլենե եռաբաշխիչի մոնտաժում	հատ	2	0,11	0,220
12	շուկա	de20 պոլիպրոպիլենե եռաբաշխիչի մոնտաժում	հատ	2	0,06	0,120
13	շուկա	de25xde20 պոլիպրոպիլենե անցումի մոնտաժում	հատ	2	0,05	0,100
14	շուկա	de25 խողովակների պատերին ամրացման խամութների մոնտաժում	հատ	4	0,05	0,200
15	շուկա	de20 խողովակների պատերին ամրացման խամութների մոնտաժում	հատ	13	0,05	0,650
		Ընդամենը				55,224
		Ջրահեռացման համակարգ				
1	E16-34	Փ100 կոյուղու պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում, փորձարկումով	զմ	4.0	2,17	8,680
2	E16-33	Փ50 կոյուղու պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում, փորձարկումով	զմ	9.8	1,19	11,662
3	E22-365	Փ100, $\alpha=90^\circ$ պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	1	1,17	1,170
4	E22-365	Փ100, $\alpha=45^\circ$ պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	4	1,19	4,760
5	E22-365	Փ50, $\alpha=90^\circ$ պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	5	0,93	4,650
6	E22-365	Փ50, $\alpha=45^\circ$ պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	1	1,00	1,000
7	E22-366	Փ100 պոլիպրոպիլենե թեք եռաբաշխիչի մոնտաժում	հատ	4	1,88	7,520
8	E22-366	Փ50 պոլիպրոպիլենե թեք եռաբաշխիչի մոնտաժում	հատ	1	1,50	1,500
9	E22-366	Փ100xՓ50 պոլիպրոպիլենե անցումի մոնտաժում	հատ	2	1,50	3,000
10	E22-365	Փ100 պոլիպրոպիլենե ստուգիչի մոնտաժում	հատ	1	1,70	1,700
11	E22-365	Ջուզարանակոնքի թողարկի կցորդիչի մոնտաժում	հատ	1	3,32	3,320
12	E22-365	Ասիական զուգարանակոնքի սիֆոնի մոնտաժում	հատ	1	3,92	3,920
13	E22-365	Կոյուղու ձկուն կցորդիչի մոնտաժում Փ100	հատ	2	2,20	4,400
14	շուկա	Փ100 խողովակների պատերին ամրացման խամութների մոնտաժում	հատ	4	0,25	1,000
15	շուկա	Փ50 խողովակների պատերին ամրացման խամութների մոնտաժում	հատ	3	0,14	0,420
		Ընդամենը				58,702
		Սանիտարական սարքեր				
1	E17-28	Լվացարարանների տեղադրում, ներառյալ ծորակ-խառնիչը եւ սիֆոնը	կ-տ	2	23,10	46,200
2	E17-61	Ջուզարանակոնքերի տեղադրում թեք թողարկով, լվացման բաքով	կ-տ	1	27,00	27,000
3	E17-61	Ասիական զուգարանակոնքերի տեղադրում լվացման բաքով	կ-տ	1	14,00	14,000
4	E17-38 կիր.	Լվացման ծորակների տեղադրում	կ-տ	1	9,60	9,600
5	E17-36	Հոսակների տեղադրում Փ50մմ	կ-տ	1	2,00	2,000

6	շուկա	Թղթի կախիչ	հատ	2	3,10	6,200
7	շուկա	Օճատուման	հատ	2	2,50	5,000
8	ԻնՖ. տեղ.	Հայելի	հատ	2	7,40	14,800
		Ընդամենը				124,800
		Ընդամենը՝ Բաժին-2				1165,032
		Բաժին-3				
		<u>Թեքահարթակի շինարարական աշխատանքներ</u>				
		<u>Քանդման աշխատանքներ</u>				
1	E46-124	Միջանցքի մետաղապլաստե դռների ապամոնտաժում	մ2	3.3	1,08	3,564
2	E46-109	Բազալտե սալերի քանդում	մ2	5.3	0,39	2,067
3	E46-131	Բազալտե աստիճանների քանդում	զմ	5.5	1,13	6,215
4	E46-99	Բետոնե հատակի քանդում	մ3	1.6	15,07	24,112
5	C310-3 տ.մ.կ 29	Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 3կմ	տ	6.2	2,15	13,330
		Ընդամենը				49,288
		<u>Կառուցողական աշխատանքներ</u>				
1	E6-1 կիր.	Բետոնե թեքահարթակի իրականացում B15 դասի բետոնով	մ3	0.9	35,60	32,040
2	E15-77	Թեքահարթակների երեսպատում բազալտե սալիկներով 40մմ հաստ.	մ2	5.9	14,00	82,600
3	E15-77	Թեքահարթակների կողային հատվածների երեսպատում բազալտե սալիկներով 20մմ հաստ.	մ2	1.8	12,00	21,600
4	շուկա	Թեքահարթակի այլումինե բազրիքների տեղադրում	զմ	5.9	24,60	145,140
		Ընդամենը				281,380
		Ընդամենը՝ Բաժին-3				330,668
		Ընդամենը				2476,636
		Շահույթ, 7%				173,364
		Ընդամենը				2650,000
		ԱԱՀ, 20%				530,000
		Ընդամենը				3180,000

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Վայոց ձորի մարզ, գ. Շատին հասցեում:

Չափաբաժին 3. Կրթական օբյեկտների հիմնանորոգում-3
«ՎԱՅՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հիմնանորոգման համար	Աշխատանքների անվանումը	Նախագծի մասնակցի համար	Ծավալը	Միավորի ընդհանուր արժեքը		
				հազ. դրամ	Ընդհանուր արժեքը հազ. դրամ	
1	2	3	4	5	6	7
	«Վայքի հիմնական դպրոց» ՊՈԱԿ					
	Բաժին-1					
	<u>Ղասասենյակի շինարարական աշխատանքներ</u>					
	<u>Քանդման աշխատանքներ</u>					
E46-124	Փայտե դռների ապամոնտաժում	մ2	2.2	1,15	2,530	
P17-140	Թուջե մարտկոցների ապամոնտաժում	հատ	24	0,88	21,120	
